# ՆՈՐ-ԴԱՐ

№ 19 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 16 Փետրվարի 1888 Երեքշաբթի 16 Փետրվարի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 19

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6½ բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ., ամիսը՝ 1 բ. 50 կ., Հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութիւն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., երկրամասերի համար կրկնապատիկ։


## ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

# ՆՈՐ-ԴԱՐ

Լրագրի բաժանորդագրութիւնը շարունակվում է.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | | |
|---|---|---|---|
| Յունվարի 1-ից . . . . . | 10 բ. — կ. | Յուլիսի 1-ից . . . . . | 6 բ. — կ. |
| Փետրվարի 1-ից. . . . . | 9 » — » | Օգոստոսի 1-ից. . . . . | 5 » 25 » |
| Մարտի 1-ից . . . . . | 8 » 50 » | Սեպտեմբերի 1-ից. . . . | 4 » 50 » |
| Ապրելի 1-ից . . . . . | 8 » — » | Հոկտեմբերի 1-ից . . . . | 3 » 50 » |
| Մայիսի 1-ից . . . . . | 7 » 25 » | Նոյեմբերի 1-ից . . . . . | 2 » 50 » |
| Յունիսի 1-ից . . . . . | 6 » 50 » | Դեկտեմբերի 1-ից . . . . | 1 » 50 » |

Եւրոպա, Թիւրքիա և այլ հեռաւոր երկիրներ տարեկան գինը՝ 30 Ֆրանկ, վեց ամսականը՝ 20 Ֆրանկ։

Խմբագրատունը գտնվում է Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Թիֆլիսի ժողովարանին (կլուբին) կից՝ Զուբալօվի տանը։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Քրոնիկոն.—Լուրեր։ Տիկրը որպէս առաջարկ ուսումնասիրութեան (վերջ)։ Դէպից—Դէպից։
Քաղաքական.—Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագրները։
Յայտարարութիւններ։


## ՔՐՈՆԻԿՈՆ

Աշխատելով կարելոյն չափ չուտ հաղորդելու ընթերցող հասարակութեան այն ամեն լուրերը, որոնք կարևոր են և կարելի է հրատարակել, «Նոր-Դար»-ը շատ անգամ ամիսներով առաջ հրատարակել է տեղեկութիւնները հոգևոր բարձր իշխանութեան անելիք կամ արած կարգադրութիւնների մասին, որոնք յետոյ իրագործուել են։ Այսպէս Թեմական առաջնորդների փոփոխութեան մասին «Նոր-Դար»-ի լուրերը՝ լոկ լուրեր չեն մնացել։ Այս վերջին հանգամանքը Թող է նկատի ունենան նրանք, որոնք մեր հաղորդած լուրերը աշխատում են հերքել—բառերով։

—

Եթէ գործիչը ունենում է բարեկամ, նրան չեն պակասում և Թշնամիները. նոյնպէս լրագիրը ունենում է իւր բարեկամները և իւր Թշնամիները։ Թշնամիները լինում են ագնիւ կամ ցած, խելօք կամ տխմար, ասբլ կամ բեզասբլ... Այսպէս «Նոր-Դար»-ն էլ ունի իւր Թշնամիները, որոնք իրենց սրբազան պարտքն են համարում ձեռքից եկածը չխնայել նրան ցեխոտելու, անուանարկելու, վնասելու համար։ Եթէ այդ կոյր Թշնամիներին ասեն, որ «Նոր-Դար»-ը ամբողջ Հայոց աղգը եռեսական դրախտ է տարել, դրանք կը գունատուին, կը մեռնեն և դրախտն էլ դժոխք կը հռչակեն... և չեն կամենալ, որ այդ լինի։ Հայոց աղգը աւելի եկեղեցական ժողովուրդ է, քան աշխատած լինելով, կարելի է և լրագիրների Թշնամիներին Թեմերի վերայ բաժանել և հաշուել, Թէ ինչ տուղ և նիհար Թշնամիներ ունին լրագիրները այս կամ այն Թեմում։ Օրինակ մեր Թեմում մի Թեմական ձեռք, ահա քանի տարի է իւր պաշտօնից օգուտ քաղելով, որտեղ հասնում է վնասում է Թերեթէ տարածման և անուանարկում է նրան։ Այս տարի էլ չքաշուեց օգտուելու իւր պաշտօնից Թերեթը զրպարտելու գործին առանձին ոյժ տալու, այն ինչ եթէ մի վոքը ազնիւ և անաչառ Թշնամի լինէը, դիւրին էը և ոչինչ չարժէը նրա համար մեկ խօսքով ճշմարտութիւնը յայտնելու և անմոռն զրպարտութիւններին վերջ տալու։ Ի հարկէ Թշնամուց խաթը լրատունք չունինք սպասելու, Թող նա հետևէ «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» մովսէսական օրէնքին. փոյթ չէ. բայց ցաւն այն է, որ մենք այդ օրէնքին չենք հետևել. եթէ հետևելու լինէինք, այն ժամանակ աշխարհն շատ բան կիմանար և մեր սասծներն պարապ և անհիմն խօսքեր չէին լինել։

—

Թիֆլիսցի երիտասարդ ուսումնասիրատ տեխնիկ պ. Աբշակ Բարեանը, ինչպէս մեզ հաղորդում են, պատրաստելով հայերէն մի ամսագրի ծրագիրը, նորերումս դիմել է ուր անկ է հրատարակելու Թոյլտուութեան խնդրագրով։ Հրատարակելիք հայերէն ամսագիրը կոչուելու է Մ ի տ ք։

—

Մի քանի օր շարունակ Թիֆլիսում եղանակը անձրևային է, շարունակ անձրևին հետևում է ձիւնը, որ խոլոյն հալվում է. փողոցներում անտանելի ցեխեր են։

—

Կիրակի, փետրվարի 14-ին, վանքի Մայր-եկեղեցում կատարուեց Աբժանայելչատուկ Ներսէս V կաթողիկոսի հոգեհանգիստը։ Ներկայ էր խուռն ամբոխը, Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձուները, ուսուցչական խումբն ու աշակերտները։ Պատարագից յետոյ կատարուեց հոգեհանգստեան կարգը, որից յետոյ բառական Թուով ժողովուրդ, Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձուներն և աշակերտները հաւաքուեցան Ներսիսեան Դպրանոցի դահլիճը, ուր նոյն դպրանոցի ուսուցչ պ. Քարամեանցը լսուեց մի ճառ, որ լաւ տպաւորութիւն գործեց ժողովրդի վերայ։ Ուսումնարանում հանդիսի համար ամենևին պատրաստութիւն չէին տեսել՝ ինչպէս այդ յայտնեց և դպ. Աբժանապատիւ Ցիսուչը։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Արդէն տեղւոյս Մարդասիրական Ընկերութեան այս տարուայ ունեցած ընդհանուր ժողովի մասին մի լուր էի հաղորդել։ Այդ ընկերութեան ընդհանուր ժողովը կայացաւ այս տարի յունվարի 30-ին։ Պէտք է ասեմ, որ 23 տարի գոյութիւն ունեցող այս ընկերութիւնը այս անգամուայ պէս բազմամարդ ժողով չէ ունեցել։ Ամեն անգամ ընդհանուր ժողովներին 8—10 հոգի նոր անդամ էին գրվում ընկերութեան, բայց այս տարի այդ կողմից էլ գործը աղոց էր, ըստ որում 60-ից աւելի նոր անդամները գրուեցան Ընկերութեան՝ 5-ական րուբլի անդամավճարը հատուցանելով։ Այդպիսով Ընկերութիւնը նոր անդամներից վաստակեց առնուազն 300 րուբլի։ Շնորհակալութեան արժանի են նրանք, որոնք իրենց աշխատանքը չխնայեցին ընկերութեան անդամների թիւը աւելացնելու համար։ Ընկերութեան խորհրդի համար նոր անդամների ընտրութիւնն էլ աղոց անցաւ։

Ցոյս ունենանք, որ Ընկերութեան վարչութեան գլուխ անցնող նոր անդամները եռանդով կը կատարեն իրենց ստանձնած հասարակական պաշտօնը։

—

ՆՈՐ-ՆԱԽՋԵՒԱՆԻՑ. — Քաղաքիս ջրմուղքի (водопроводъ) շինութիւնը առաջիկայ ամառը բոլորովին պատրաստ կը լինի։ Դրա համար քաղաքացիները շատ ուրախ են, Ճարտարապետ Եիժենկը կօնտրատից ու նրա օգնական երիտասարդից շատ գոհ, թէև մեր դրացի Բօստով քաղաքի ռուս աղաները մեզ ծաղրում են, և ռուս լրագրներում պատահում են ծաղրարանութիւններ մեր ջրանցքի մասին, բայց այդ բոլորը նախանձի պըտուղ է։ Ռօստովցիները իրենց ջրմուղը 35, 45 տարիներով կօնցէսիօների ձեռք տուած են իրենց իրաւունքը, ուրիշներին գերի են եղել և Թանկ գնով էլ ջուր են խմում, իսկ Նախիջևանը քաղաքի փողով շինելով ջրմուղը, ջրի տէրը ինքն է, որով մի քանի տարիից յետոյ էլ ձրի ջուր պիտի ունենայ մեր ժողովուրդը։ Մեր ջրմուղն ունի երկու խողովակ, մինը աղբիւրի, միւսը՝ գետի ջրի համար։ Քաղաքի մէջ լինն ջրամբար (բասսէյն) կայ ջուր առնելու համար և հարիւրի չափ էլ հրդեհի մեջողին ջուր մատակարարող խողովակներ կան։ Քաղաքի վերայ մօտ երկու հարիւր հազար րուբլու ծախք նստեց ջրմուղի շինութիւնն և քաղաքը այդ ծախքը արեց առանց փոխառութեան։

—

Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են.—Թիւրքիայում այժմ հայոց գլխաւոր Թեմերը պարապ են մնում, ոմանց առաջնորդները բոլորովին հրաժարած լինելու և ոմանք էլ բոլորովին առաջնորդ չունենալու պատճառով։ Ոչ մի ժամանակ պատրիարքարանն այդքան անհոգ չէը եղել. նա ինքը ոչինչ չէ անում և գործ անողների ոտները տակն էլ փոս են փորում։ Սակայն մես կողմից էլ Թշնամին քնած չէ. ամեն տեսակ կրօնի քարոզիչներ, Թէ արևելքից և Թէ արևմուտքից, Ջանք են գործ դնում օգտուելու հայերի տարտամ դրութիւնից...։ Սակայն ինչքան հոգևորականները կան կ. Պօլիս, որոնք դատարկ չրջում են... Անցեալ օրերը «Ծաղիկ» լրագրի մէջ խօսակցութեան ձևով դուրս էր բերած մեր այդ դրութեան պատճառը, որ աւելորդ չեմ համարում առաջ բերել։

« — Հրամեցէք սրբազան հարք, էրզրում գաւառի վիճակը Թափուր է. ձեզնէ ով կունդունէ առաջնորդութիւնը։

Ձայն հանող ու պատասխանող չկայ։

—Երգնկայի վիճակին առաջնորդութիւն մը չունինք ա...բարերը երկիր մէ, օդն ու ջուրը գեղեցիկ...

Պատասխան չկայ։

—Քարբերդի վիճակը գոնէ ընդունեցէք, խաղաղ Թեմ է, հանգիստ կուտէ, կը խմէք։

Մի քանի չօրանոցումները կը լսուին։

—Քարբերդի առաջնորդութիւնը ընդունող կայ, եկէք չէ մի ըսէք սըբազան հարք, այստեղի ժողովուրդն գրեթէ վաղուց անհովիւ մնացած է։

—Իրաւ որ ես կերթայի, սակայն անձնական տկարութիւնս չը ներեր։

—Ես ալ կ'ընդունէի, սակայն սոսկալի կերպիս հարբուխ եղած եմ։

—Ա՛նս սա նեղված բեռամերիզմս չըլլար անմիջապէս ճամբայ կելնէի։

—Շատ լաւ սրբազան հարք, հետևեալ վիճակները ալ Թափուր են ով կուզէ՝—Տիգրանակերտ, Մուշ, Բաղէշ, Վան, ունա վօլեթ, տուէ վօլեթ, ունա ֆաեթաֆա։

Ձայն չի կայ։

—Հիմայ մնաց Թափուր վիճակ մը ևս, եթէ անոր չը հաւնիք, ամենգդ ալ կեդրոնը պիտի մնաք, ԻԶՄԻՐԻ առաջնորդութիւնը ով կուզէ...։

—Ե՛ս, ե՛ս, ե՛ս, ե՛ս, ե՛ս...

Օ՜ եէս օլըյէթ. քանի որ բոլոր եպիսկոպոսունք Իզմիրի վիճակին մէջ հաւնած են, ըստ մեզ գէշ չըլլար եթէ ամենքն ալ անդ ղրկուին»։

—

ՆՈՐ-ՋՈՒՂԱՑԻՑ (Պարսկաստան) մեզ գրում են.—Որպէս մեկտ, նոյնպէս և այս տարի, Քրիստոսի մկրտութեան տօնի հանդիսին խաչը ջրից հանեց Հայոսէը արքայազն Զել-եւ-Սուլթանը։ Ինչպէս սովորութիւն է, այդ առթիւ եկեղեցին ստանում է մի բաւական խոշոր գումար։ Բայց մեզ յայտնի չէ, Թէ արդեօք այդ և այդպիսի շատ արդիւնքները լրիւ նպատակի են ծառայում։ Արդեօք աւելի լաւ չէը լինել, որ փոխանակ մեծաքանակ գումարները մի Գրեգորիսի և նրա մի քանի համախոհների որկորը մտնելու, ծառայէին բազմաթիւ չքաւոր հայ մանուկների կրթութեան և դաստիարակութեանը։ Այդպիսիների չնորհիւ քաղաքիս երրորդ մասը բողոքական է դարձել և մի քանի տարուց յետոյ հայադաւան հայ չենք գտնել այստեղ։ Մեր տխուր դրութեան վերայ դարձեալ ենք ամ անկն է ուշադրութիւնը։

—

Բագուի քաղաքագլուխ պ. Դեսպօտ-Զինօվիչ դիմելով խմբագրութեանս, խնդրում է յայտնել, որ այս տարի և, ինչպէս և անցեալ տարի, Բագուում պիտի կատարուի տօնավաճառ՝ դրա համար առ ժամանակ որոշուած տեղում։ Առաջիկայ տարուանից տօնավաճառը կը լինի դրա համար յատկապէս յատկացրած տեղում։ Մենք միւս անգամ աւելի մանրամասնարար կը ծանօթացնենք մեր ընթերցողներին պ. Դեսպօտ-Զինօվիչի գրութեան հետ։

—

ՏԱԹԵՒԻՑ Տ. Տ. Ց.-ը մեզ գրում է.—Համաձայն տեղիս փոխանորդ արժանապատիւ Անանիա Հօր յայտարարութեան, հոգևոր ծայրագոյն իշխանութիւնից փետրվարի 5-ին Թոյլտուութիւն ստացուեցաւ՝ առաջիկայ գարնանը սկսելու Տաթևի հռչակաւոր և հոյակապ վանքի վերանորոգութիւնն, որի համար, գործին հմուտ մարդկանցի կարծիքով, մեծ ծախս հարկաւոր կլինի, ինչպէս այդ նկատել է և պ. Ս. Շ.։ Ջնայելով Աբժ. փոխանորդ Հօր խնայողաբար կազմած նախահաշուին՝ անկասկած է, որ ծախսը մեծ պիտի լինի, ըստ որում որքան հին և վիճակի է տանջաը՝ նոյնքան մեծ և վտանգաւոր են խախտումները—(համարեա ամբողջապէս քայքայուած) և որպէսզի նորոգելու համար անշուշտ անհրաժեշտ է մի պատկառելի գումար։

Ջնադարեան այս սուրբ և հոյակապ տաճարի վերանորոգութիւնը մի այնպիսի գործ է, որին Թեթև աչքով չպիտք է նայել, ինչպէս նայել են մինչև այսօր։ Պէտք է յուսալ, որ հայ ազգը կը Թօթափէ իրենից այն անտարբերութիւնն, որ ունէը դէպի մեր այս սրբավայրը, որ հազարաւոր տարիներից է վեր չէ դադարել իւր օգնութիւնն ազգին, այլ կօժանդակէն ըստ կարողութեան այդ... մեծ գործը գլուխ բերելու համար։

—

Փետրվարի 11-ին կայացած քաղաքային ուսումնարանական յանձնաժողովի նիստում վերջնականապէս վճռուեց տեղիս արհեստագիտական ուսումնարանում բանալ և կիրակնօրեայ դպրոց։ Այդ մասին արդէն Թոյլտուութիւն ստացուել է հայերի, ռուսների և մահմեդականների հոգևոր պետերից։ Կովկասի ուսումնարանական չրջանի պ. հոգաբարձուն էլ ոչինչ արգելք չգտնելով դպրոցի բացման համար, միայն առաջարկում է ցոյց տալ երեն մի անձն, որ պատասխանատու լինի ուսումնարանում կարգ ու կանոնի համար։ Ուսումնարանը պէտք է չորս խումբի բաժանուի 1) հայոց, 2) վրաց, 3) ռուսաց և 4) Թուրքաց, որոնց մէջ դասախօսութիւնները պիտի լինին նրանց մայրենի լեզուներով։ Դասախօսութիւնները սկսվում են սեպտեմբերին և շարունակուելու են մինչև յունիս, ամեն կիրակի օր՝ ժամը 12-ից

# ՏԻՊԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

## ՊԱՐՈՒ ԳՈՐՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ.

(Վերջ)

Ցաւալին է, որ Տիպէր Կախառայ էր ամերիկեան հասարակութեան մէջ ստեղծուած նոր կարծիքներուն, որոնք ամենեւին չեն համապատասխաներ անոր իրական էութեան։ Ան ամենեւին ալ ամերիկացի չէր, ինչպէս կը կարծեն շատեր։ Ան ծնած էր Ֆրանսայի մէջ, Լիոն քաղաքին մէջ, 1813 թուականին։ Իր հայրը Ֆրանսացի էր, իսկ մայրը՝ Իտալուհի։ Ան իր մանկութեան տարիները անցուցած էր Ֆրանսայի մէջ, ուր ստացած էր իր կրթութիւնը։ Ան ամենեւին ալ ամերիկացի չէր, ոչ ալ անգլիացի։ Ան ֆրանսացի էր, ֆրանսացի՝ իր ամբողջ էութեամբ։ Ան ֆրանսացի էր իր ծնունդով, իր դաստիարակութեամբ, իր ազգութեամբ, իր սովորութիւններով, իր ճաշակով, իր կրքերով, իր ամբողջ էութեամբ։ Ան ֆրանսացի էր իր ամբողջ կեանքին մէջ։ Ան ֆրանսացի էր նաեւ իր մահուան ժամանակ

գամաւոր Ադամ Լուկսը, ազգային կծնվկնտում, յանկարծ սքանչացած Շարլօտտա Կորդէյ գեղեցկութեամբ և հերոսութեամբ, նրան աւելի մեծ հերոս անուանեց Բրուտոսից։ Ցեղափոխական տրիբունալը նրան մահուան դատապարտելուց յետոյ, Ադամ Լուկսը բացականչեց. «Նշանակում է ես բաւականութիւն կունենամ նրա սերոյն մեռնելու»։

Ցանկալի էր, որ այդ հերոսուհուն յատուկ ողբերգական վեհութիւնն պահպանուէր և նրան չսպիակէին ֆրբանսիական բեմի վերայ սերալին արիաներ երգելու։ Ոստի կօմպօզիտօրն (օպէրա գրողն) իրաւունք ունի ներկայացնելու միայն նրա վառ ազգասիրութիւնն, ազնիւ անձնազոհութիւնն և վեհ արհամարհանքը դէպի կեանքը»։

***

XIX դարում «էմանսիպացիա» (ազատութիւն) խօսքը մասնաւոր սեփականութիւնից դարձել է ընդհանուրի սեփականութիւն։ Այժմ խօսում են «էմանսիպացիա»-ների մասին, պահանջում են «էմանսիպացիա»։ Իհարկէ, քանի գաղափարը նոր է՝ այնքան կուսակիցները եռանդուռ են, այքան նրա համար կուռողները եւանդով են կռւում և, բնականաբար, այնքան էլ նրանք ենթակայ են չափազանցութիւնների մէջ ընկնելու վտանգին։ Քանի գաղափարը մեծ է, այնքան էլ սխալները մէջ ընկնողների թիւը շատ է. քանի գաղափարը վեհ է, այնքան էլ նրան պաշտպանողների մէջ շատ պապատահում են չնչին, իրենց վարմունքով գաղափարը ծաղրի առարկայ դարձնողների թիւը։ Այդ բանին աւելի նպաստամատոյց է լինում մամուլի այն մասը, որ իւր ոտի տակ հաստատ հող չգտալով, աշխատում է իւր ընթերցողներին շլացնել փայլուն խօսքերով, նրանց փղաղներով կերակրելով...։ Այսպէս է և մեզանում։ Օրինակ առնելով կանանց խնդիրը, մենք տեսնում ենք, որ այժմ տեղից վերկացողը խօսում է «կանանց էմանսիպացիայի» մասին։ Բայց իսկապէս ինչ է այդ «էմանսիպացիան՝» այդ ոչ քարոզողներն են հասկանում և ոչ պահանջողները...։

*

Անցեալները կենդում տեղի է ունեցել մի բաւական օտարոտի վիճաբանութիւն 12 երիտասարդների և 12 աղջիկների մէջ։ Կենդի երիտասարդները իրենց հայեացքը ամփոփել են հետևեալ կերպով. «Կրթութիւնն, որ ներկայումս տրվում է մեր հասարակութեան ոչ միայն բարձր դասակարգի, այլ և մնջին դասակարգի աղջիկներին, նրանց մէջից արմատախիլ է անում այն ամենը, ինչ որ խոհուն և առողջամիտ մարդի կարծիքով պէտք է բարեկիրթ կնոջ յատկանիշ լինի։ Սիրոյ զգացմունքը, որի վերայ պէտք է հիմնուի ընտանեկան երջանկութեան երկաթը, մեր աղջկերանց մէջ կանխաժամ և արհեստական միջոցներով է ծագում և խամրում աւելի առաջ, քան թէ նրանք կատարելահասակ են դառնում։ Այդ զգացումի փոխարէն, անկարգ կեանքից առաջացած սանձարձակ երևակայութեան մէջ զարգանում են անդիմադրելի ցանկութիւն դէպի քմահաճոյականութիւնն և զարմանքները և դէպի դրանց հասնելու միջոցները ձեռք բերելու։ Այժմեան աղջիկները աշխատում են այդ միջոցները ձեռք բերել իրենց հրապոյրի փոխանակութեամբ, որ նրանք հաշիւ են անում ծախսելու նրան՝ ով աւելի կը վճարի։ Ժամանակից աղջիկները պատահելով մի ամուրի երիտասարդի, իրենց մայրերի առաջն կորելով աշխատում են տեղականալ նրա ստացած ռոճիկի քանակութեան մասին և դրա համեմատ էլ շատ կամ քիչ ուշադրութիւն են դարձնում նրա վերայ. իսկ մարդն ներքին արժանիքների մասին տեղեկութիւն հաւաքում են ամենից յետոյ և ամենից քիչ...։ Մի խօսքով, մեր աղջկերքը երեխայութիւնից արդէն սովորում են ամուսնութեան վերայ նայել որպէս մի անհնարաճառութեան վերայ՝ իրենց հայեացքը ձեռնտու պայմաններով, որ ապահովէը նրանց դատարկ կեանքը և միջոց տար ուրիշների կարողութիւնից քանի կարելի է շատ օգտուելու»։ Կենդի երիտասարդները այս և ուրիշ մի քանի պատճառներով, գալիս են այն եզրակացութեան, թէ «կնտելիգէնտ դասակարգի, որին պատկանում ենք և մենք, օրիորդներին թողնելով զարդ լինելու իրենց ծնողներին և մխիթարելու իրենց կրթող մայրերին, մենք բոլորս պատրաստվում ենք կարճ միջոցում պսակուել հասարակ դասարգի աղջկերանց հետ»։

Այդպիսով ուրեմն, կենդի երիտասարդները մտադիր են լաւ կանայք ձեռք բերել։ Սակայն կենդի աղջկերքն էլ ետ չեն մնացել երիտասարդներից. նրանք էլ են պատասխանել։ Նրանց դրութեան մէջ առաջ յայտնում են, որ իրենք շատ լաւ հասկանում են մօր և կնոջ ծանր և սուրբ պարտաւորութիւնները, բայց նախ քան մայր և կին դառնալը, հարկաւոր է խօ մի փոքր ազատ շունչ քաշել, ինչպէս որ այդ անում են տղամարդիկը մինչև ամուսնանալը։ «Բայց այդ ամեն թեթևամտութիւնները, ասում են նրանք, կանցնին, հաւատացնում ենք ձեզ, կանցնին ամուսնութեան մէջոցին, եթէ մի կողմ ձրգէք ամուսինների օտարոտի պահանջը կնոջ առաջին սիրոյ մասին, դա ձեզ համար է լաւ, որովհետև ձեռք կը բերէք փորձով խելահաս դարձած և սիրոյ և կեանքի փոփոխականութիւնն ու դատարկութիւնն հասկացող անձ։ Բայց դրա փոխարէն, պսակից յետոյ, յագեցած կեանքից և զուարճութիւններից, հաւատացէք, մենք էլ նոյնպէս հանգիստ կը փնտրենք ընտանեկան օջաղում, ինչպէս և դուք, մեր ապագայ ամուսինները։ Խոհարարուհին ու աղախինը, որոնց մօտ էք դուք փրկութիւն գտնելու որոշում արել, վարվում են ուղիղ այսպէս։ Ասլացոյն տեղ ահա ձեզ ժողովրդական երգից մի հատուած. «Քէֆ քաշը աղջիկ, քանի ազատութիւն ունիս, քանի դեռ գլուխդ չեն կապել. կը կապեն գլուխդ և ամեն զուարճութիւնն կը թռչի կը գնայ»։

Տաներկու երիտասարդներ. Դուք տեսնում էք, որ այդ կէտում մենք բոլորովին նման ենք մեր բաղդատուր հակառակորդներին։ Ուրեմն ինչի էք փախչում մեզանից։ Բայց որ դուք ձեր գրպանի մասին էք երկիւղ կրում, արդեօք դա ապացոյց չէ ձեր մէջ հերոսական հոգու բացակայութեան, որ մարդին պատրաստեցնում է անձնազոհութիւն գործելու իւր ներմ սիրած առարկայի համար։ Մենք, կանայք, հենց տղամարդկինների ասելով, ստեղծուած ենք ձեր կեանքին զարդ լինելու, Մթթէ դուք ընդունակ չէք զոհաբերութիւն անելու նրանց համար, որ ձեր կեանքի մէջ մտցնում են պօէզիա, և որոնց դուք պարտական էք ձեր կեանքի երջանիկ րոպէները։ Մթթէ դուք կարծում էք, որ աղախիններն և խոհարարուհիները ընդունակ են հասկանալու ձեր ճաշակի բոլոր նրբութիւնները և նրանց գոհացնել այնպէս, ինչպէս այդ կարող ենք անել մենք, որ մանկութիւնից վարժուած ենք դրան։

«Այսպէս ուրեմն, փոխանակ անվայել գործադուլ կազմելու, աւելի լաւ է խելքի եկէք և սովորեցէք աւելացնելու ձեր եկամուտները, իսկ մենք, մեր կարգին, ներելով ձեր ներկայ յանդուգն վարմունքը, կը վերադարձնենք դէպի ձեզ մեր հաճութիւնն, որից դուք, գիտցէք, որ այժմ զրկուած էք»։

Համաձայնեցէք, որ թէև մի փոքր չափից անց հեգնացել կենդի աղջկերքը, բայց երենց գրազը շատ յարմար է քաղաքներում ապրող հայ աղջկերանց։ Եթէ սա չնորհի բան էլ լինի, բայց և այնպէս ճշմարտանման է։ Այսպիսի լեզուով պիտի խօսեն մեր «Թեթևամիտ մամուլի» սերմանած մոքերով տոգորուած աղջկերքը։

Q.

# ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՒՐՔԻԱ.—Վէնեայի «Չանը. Թելեգրաֆ» ասելով, Սերբիայից ստացուած է կօնսուլից մի հաղորդագրութիւն, որի մէջ յայտնած է, որ Ռուսիան և Իտալիան համաձայնութիւն են կազմել երենց մէջ՝ այսուհետև Տիրոլ գեղեցկանի պահպանութեանն երենք հսկելու համար։

—«Corresp de l'Est»-ը հաղորդում է երը լուր, որ Անգլիան առաջարկել է Թիւրքիային պայմանագիր կազմել Դարդանելը գրաւելու մասին, գենուայի անգլիական նաւատորմիղը, այդ Թեղեգրաֆ ասելով, երը Թէ այդ կոչումն ունի։

ԲՕԼՂԱՐԱԿԱՆ ԴՈՒՐՍԵՐ.—«Journ. des Débats»-ին գետից գրում են, որ կղ. Բիսմարկի այն խօսքերը, Թէ՝ «եթէ աւստրօ-գերմանական դաշնակցութիւնը գոյութիւն էլ չունենար՝ պէտք է նրան ստեղծել», ըստ երևութին, հաստատում են այստեղ տիրապետող հայեացքներն, Թէ դաշնագրի հրատարակութիւնը ցոյց է տալիս, որ արևելեան խնդիրը նոր, շատ նշանաւոր շրջանի մէջ է մտել։ Բօլղարիայի վերաբերմամբ կղ. Բիսմարկի յայտնած մտքերը համաձայնում են այստեղ տիրապետող մտքերի հետ՝ նոյն կէտի վերաբերմամբ։

ՖՐԱՆՍԻԱ.—Վերջի ժամանակներս, մանաւանդ աւստրօ-գերմանական դաշնագրի հրատարակուելուց յետոյ, Ֆրանսիայում շատ խօսում են Ֆրանսո-ռուսական դաշնակցութեան մասին։ Սակայն վերջի ժամանակներս մեծ աղմուկ բարձրացրեց և Ֆրանսիական ամբողջ մամուլի ուշադրութիւնն իւր վերայ դարձրեց «Revue de deux Mondes»-ի մէջ հրատարակուած մի յօդուած, որի մէջ յօդուածագիրը ապացուցանում է, որ ներկայ Ֆրանսիայի հետ Ռուսիան կարող չէ դաշնակցել։ Այդ յօդուածը վերագրում են Պարիզեան գրաֆին։

ԳԵՐՄԱՆԻԱ.— Պօզնանը գերմանացնելու մասին գործադրած գերմանիայի ջանքերը, ինչպէս երևում է, խոստ աջող են առաջ գնում, ինչպէս որ այդ խոստովանում են տեղական լեհական թերթերը։ Ըստ երևութին լեհացիներն այնքան տխրած և գբգռուած չեն գերմանական կառավարութեան դէմ, որքան պապի և կաթոլիկ հոգևորականութեան վարմունքով։ Անցեալները լեհական թերթերից մինում հրատարակուեց մի յօդուած, ուր ի միջի այլոց ասուած է. «Մենք, լեհացիներս, պատրում ենք պապին և վերաբերվում ենք դէպի նա կատարեալ հաւատով։ Բայց երբ տեսնում ենք, որ պապը, մի ինչ որ իրեն համար Թանկ արժեցող բանի համար՝ մեզանից խլում է այն, ինչ որ ինքն Աստուած է տուել մեզ, որ նա վերցնում է մեզանից մեր ազգային հովիւը, մեր ազգային լեզուն, այն ժամանակ մենք, լեհացիներս չենք դադարել non posumus կրկնելուց, մինչև որ Աստուած մեւս կողմից մեզ չուզարկէ այն՝ ինչ որ մի կողմից խլում է մեզանից պապը, կամ Թոյլ է տալիս ուրիշներին խլել՝ առանց դրա դէմ բողոքելու։ Դեռ երկու փորձանքի մէջ է ձգել լեհացիներին.—կամ լեհացիները պէտք է հեռանան պապից՝ որ դաւաճանել կը նշանակէր կաթոլիկութեան, կամ հրաժարուել լեհաստանից, որ՝ կը նշանակէ դաւաճանել հայրենիքին և մեզ»։

Պէտք է ասել, որ լեհացիները օրինակելի հայրենասիրութիւն են ցոյց տալիս, երբ գերմանական կառավարութիւնն աշխատում է խլել նրանցից ազգային լեզուն՝ արգելելով դասախօսութիւնները այդ լեզուով անել ուսումնարաններում, խլել կրօնը՝ առաջարկելով փոխանակ լեհերէնի գերմաներէն դասախօսել այդ առարկան էլ։

—Աւստրիա-գերմանական դաշնագրի լրացուցիչ երկու յօդուածներով որոշվում է երկու դաշնակից պետութիւնների զօրքերի այն Թիւը, որ նրանք պէտք է պատերազմի մէջոցին դուրս բերեն, նոյնպէս և պատերազմական գործողութիւնների վերաբերմամբ համաձայնութիւն է կայացած։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 Փետրվարի.— Այսօր բօլղարական խնդրի վերաբերմամբ հրատարակուած է պետական հետևեալ տեղեկութիւնները.— «Վերջի ժամանակներս արտասահմանից ստացուած մասնաւոր հեռագիրը հաղորդում է, որ Կայսերական դեսպանը Բերլինում բօլղարական խնդրի վերաբերմամբ առաջարկութիւններ է արել գերմանական կառավարութեան։ Իրերի ներկայ դրութիւնն ճիշդ ըմբռնելու համար, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ Կայսերական կառավարութեան սկզբներում յայտնած հայեացքը բօլղարական խնդրի մասին, Թէ՝ Բերլինի դաշնագիրը հիմք է պետութիւնների համաձայնութեամբ Բալկան Թերակղզու վերայ հաստատուած իրերի դրութեան, և նրա մէջ է միակ միջազգային ապահովութիւնը այնպիսի ցնցումների դէմ, որոնք վտանգաւոր են Թերակղզու երիտասարդ կառավարութիւնների համար։ Հենց այս տեսակէտով էլ վերաբերուեց Կայսերական կառավարութիւնը դէպի Բօլղարիայում կատարուած դէպքերը՝ նրա առաջին իշխանի հրաժարականից յետոյ։ Կօբուրգի Ֆերդինանդ պրինցի Սօֆիա գալը և իշխանութիւնը խլելը կատարուել է հաստատուած դաշնագրութեան դէմ, որի պատճառով էլ Կայսերական կառավարութիւնը հենց այն ժամանակ էլ յայտարարեց, Թէ նա մտադիր չէ պրինցին՝ Բօլղարիայի օրինաւոր կառավարիչ ճանաչել և միևնոյն ժամանակ փոքրիկ միւս պետութիւններին էլ համոզելու նոյն մտքին։ Այժմ աչքի առաջ ունենալով ամեն տեղեր էլ յայտնուած ցանկութեան՝ վերջ տալու գոյութիւն ունեցող վրդովմունքներին, որոնց արմատը գլխաւորապէս ծածկուած է Բօլղարայի երկմիտ դրութեան մէջ, Կայսերական կառավարութիւնը պարտք համարեց կրկին փորձել պետութիւնների կարծիքներն յայտնել տալու Բօլղարիային վերաբերեալ դաշնագիրների անձեռնմխելիութեան մասին և նոյնպէս այն, Թէ հարկաւոր է նրան կրկին օրինաւորութեան ճանապարհի վերայ դնել։ Պետութիւնների այդպիսի յայտարարութեան բնական հետևանքը պէտք է լինէը Կ. Պօլսում առաջարկութիւն անելը, որ Սուլթանը յայտնէ բօլղարներին, Թէ այն անձը, որ իշխանի կոչում ունի, ոչ Թէ Բօլղարիայի օրինաւոր կառավարիչն է, հապա իշխանութեան յափշտակող է։ Կայսերական կառավարութեան կարծիքով, այդպիսի յայտարարութեան նախաձեռնութիւնը, անկասկած, պատկանում է Սուլթանին, որի իրաւունքները, որպէս գերիշխանի, անմիջապէս շօշափվում են Սօֆիայում իրերի ապօրինի դրութեամբ։

Կանխաւ վճիռ չդնելով ապագայի մասին, Կայսերական կառավարութիւնը, իւր նպատակների և մտադրութիւնների մասին եղած կասկածներին վերջ տալու նպատակով, կարևոր չէ համարում թագցնելու գործելու այն եղանակը, որին նա հաստատ վճռել է հետևել բօլղարական խնդրում, երբ տագնապի երկարատևելու պատճառներն կը հեռացուին։ Բօլղարիան իւր գոյութեամբը պարտական է Ռուսիայի զոհաբերութիւններին և ջանքերին, որ հենց այդ պատճառով էլ դեռ ելի համակրանքով վերաբերվում է դէպի այդ երկիրը և վշտով տեսնում է նրա կրած փորձանքները, սակայն հեռու մնալով ինչպէս նախապաշարումներից նոյնպէս և ատելութիւնից, ուստի և այդ պատճառով իւր պատուին վայել չէ համարում նրա ներքին երկպառակութիւններին միջամտելը։ Կայսերական կառավարութիւնը նոյնպէս հեռու է ամ և իցէ մեղադրելու մտքից անցեալի համար։ Սակայն մոլորութեան ան կեղծ խոստովանութիւնը նրա աչքում կարող է գրաւական լինել երերի դէպի լաւը փոխուելուն։ Ռուսիան բացառապէս Բօլղարիայի երջանկութիւնն է ցանկանում և, իշխանութեան կառավարչի հեռանալովը, նա պիտի սպասէ բօլղարական ժողովրդի կողմից անկեղծ ցանկութեան, որ կարտայայտէ իւր ներկայացուցիչներիմիջոցով, որպէս զի մոռացութեան տրուի անցեալը և կջանայ փոխադարձ հաւատարմութեան վերայ հիմնուած յարաբերութիւնները վերականգնել, միևնոյն ժամանակ Կայսերական կառավարութիւնը նոյնպէս հեռու է և բօլղարների ազատութիւնն ճրնշելու մտադրութիւնից, որ հաստատուած է դաշնագրով երկրի ներքին կազմութեան և նրան կառավարելու մասին։ Նա կարող չէ մոռանալ, որ Բօլղարիան այդ ազատութեամբը գլխաւորապէս պարտական է Ռուսիային, և Թէ մեր իսկական կոչումն է, ոչ ոտնհարել, այլ պաշտպանել բօլղարական ազգի իրաւունքները, միայն Թէ ժողովրդին կառավարելու կոչուած մարդիկ խելացի կերպով օգտուին այդ իրաւունքներից։ Թող բօլղարները, փորձից խելահաս դարձած, վերջապէս հասկանան անձնական ձգտումներից և հաշիւներից ետ կենալու անհրաժեշտութիւնը և միացնեն իրենց ջանքը իրենց հայրենիքը օրինաւորութեան և բարեկեցութեան ճանապարհի վերայ հանելու համար և, այդ միջոցին որ և է կողմնակի միջամտութիւն աննպատակ և աւելորդ կը դառնայ և ապագայ իշխանի հաստատութիւնը կկատարուի դաշնագրով որոշուած պայմաններում։ Բօլղարական տագնապի ամենասկզբին արդէն Կայսերական կառավարութիւնը անդադար առաջնորդուել է այդ խոկմունքով, որոնք նրան ստիպեցին մերժելու ստիպողական միջոցներով կարգը վերականգնելու միտքը։ Միևնոյն ժամանակ, հասկանալի է, որ կառավարութեան յափշտակչի մինչև հեռանալը, Կայսերական կառավարութիւնը պիտի շարունակէ այդ երկրում իրերի դոյութիւն ունեցող դրութիւնը ապօրինի համարել, համոզուած լինելով, որ այդ դրութեան բարձումը ամենայուսալի միջոցն է ընդհանուր խաղաղութիւնն վերականգնելու համար։

ԼՕՆԴՕՆ, 12 Փետ։ Լրագիրները խոր-

հրդաժելով բօլղարական խնդրի մասին ռուսական կառավարչական հաղորդագրութիւնը, խոստովանում են Ռուսիայի չափաւորութիւնը։ «Times»-ն ասում է, որ բայց և այնպէս, այդ կարգադրութիւնը կարող է միայն հիմնակէտ դառնալ ուրիշ բանագնացութիւնների համար և իսկական ճգնաժամը կառաջանայ, երբ Ռուսիան իւր նպատակների իրագործման համար գործադրելի միջոցների խնդիրը կը յարուցանէ։

ԼՕՆԴՕՆ. — Պատգամաւորների ժողովում մարքիզ Սալսբիւրին բօլղարական խնդրի մասին ճառ խօսեց։ Նա ասաց, թէ բօլղարներին ապօրինի գործերի մէջ մեղադրելը լիովին ճշմարիտ չէ։ Նա այն կարծիքն յայտնեց, որ բօլղարական խնդրի մասին համաձայնութիւն կազմելը հեշտ բան չէ. կոնգրէսը կամ կոնֆերէնցիան անյարմարութիւններ ունին, որովհետև, հազիւ թէ կարելի լինի յուսալ պետութիւնների համերաշխութեան վերայ։ Այդպիսի միջոցները կարող են աւելի մեծ վտանգ առաջացնել, քան ինչ որ այժմ է։ Աւելի նպատակայարմար է պետութիւնների բանագնացութիւնները և պէտք է յուսալ, որ այդ ճանապարհով աւելի հեշտ կլինի կարծիքների զանազանութիւնը հաշտեցնել միմեանց հետ։ Սակայն մարքիզ Սալսբիւրին ի բոլոր սրտէ ձայնակցում է իշ. Բիսմարկի խօսքին, թէ բօլղարական խնդրի առթիւ եւրոպական պատերազմը կը խայտառակէր Եւրոպային։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կառավարչական երէկուայ Հաղորդագրութեան առթիւ «Jour. de St.-Pétersbourg»-ը ասում է. «Ծրագրի մէջ պարզուած նախագիծը վկայում է, որ Ռուսիան զեղուն է ամենախաղաղասիրական նպատակներով, որ նա Բօլղարիայում ուզում է օրինական կարգը վերականգնել բարոյական հեղինակութեամբ և մտադիր չէ ոտնահարել նրա ինքնուրոյնութիւնը։ Պետութիւնները, որոնք անկեղծօրէն խաղաղութիւն են ցանկանում, չեն կարող օրինաւոր աջակցութիւն չցոյց տալ այդ ջանքերին, որոնք ուղղուած են հանգուցանելու։

Նոյն լրագիրը հնար ունի յայտարարելու, որ Կայսերական կառավարութիւնը ոչ մի շրջաբերական չէ ուղարկել բօլղարական խնդրի առթիւ։

ՊԱՐԻԶ.—Վիլսոնի գործի քննութիւնը վերջացաւ։ Դատավճիռը մի շաբաթից յետոյ պիտի յայտնուի։ Գաղտնի ֆօնդի խնդրի մասին մինիստրութիւնը հաւատարմութեան խնդիր բարձրացրեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Բարձրագոյն հրամայուած է.—Ծողովրդական թատրոնական բեմերում, կամ այն թատրոններում, ուր մուտքի ժամանութեան պատճառով գլխաւորապէս յաճախում են հասարակ դասակարգի մարդիկ, կարող են ներկայացնել դրամատիկական ցեխգուբայի թոյլ տուած այն պիէսները, որոնք հաւանութիւն կը ստանան տպագրութեան գործի գլխաւոր վարչութիւնից՝ թատրոն պահողների կամ հեղինակների ու թարգմանիչների առանձին խնդրամատոյց լինելով։

Հրատարակուած է Միքայէլեան ձիամարզարանի ընկերութեան կանոնադրութիւնը։ Ձիամարզարանի հիմնարկողն է իշ. Միխայել Միխայլովիչ Դօլգօրուկով։

Ինչպէս լսւում է, վաղը պետական խորհրդում քննւում է Շուրջբալտեան երկիրներում մրցունելիք ոստիկանական նոր բարեփոխութիւնների նախագիծը։ Ընտրողական սկզբունքը ոչնչացւում է. ոստիկանական ծառայողները նշանակւում և ենթարկւում են իշխանութեան՝ ընդհանուր կարգով. տանուտէրներին (վօլօստնոյ ստարշինայ յատկացւում է ոստիկանական մի քանի իրաւունքներ. ոստիկանութիւնը սկիզբներում պիտի պահպանուի կառավարութեան հաշուով, յետոյ տեղական միջոցներով։ Բիւղայինների վերայից ոստիկանական տուրքը վերանում է։

ԽԱՐԿՕՎ.—Խարկովի հողային բանկը 1887 թ. համար դիվիդենտ տալիս է 14%՝ 28 ական րուբլի։ Բանկի զուտ շահն է 900,000 րուբլի.

ՊԱՐԻԶ.—Այստեղի լրագիրները կարծում են, որ ներկայ մինիստրութեան գոյութիւնը ապահովուած է միայն մինչ բիւդջէի մասին վիճաբանութիւնները վերջանալը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 Փետրվարի.— «Journ. de St.-Pétersb.»-ը յայտարարում է «Бирж. Вѣд.»-ի մետաղական փողերի գործածութեան մասին հաղորդած լուրի վերաբերմամբ, թէ այդ լուրը այն նշանակութիւնն չունի, ինչ որ տալիս է նրան «В. В.»-ն, մանաւանդ որ ոչինչ կապ չունի Ֆինանսների վարչութեան հետ և լիշեալ տեղեկութիւնն քաղել է այնպիսի աղբիւրներից, որոնք մի առանձին յարգ և հաւատարմութիւն չունին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ֆինանսների մինիստրութեան մէջ եղած մի առանձին յանձնաժողով նախագիծ է կազմել հացաղային իւղերից տուրք չառնելու մասին։

Ֆինանսների մինիստրութիւնը մտադիր է հրատարակել շաքարի ճգնաժամը բացատրող փաստաթղթեր։

Ձանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը քննում է Շուրջմոսրեան և Ուսուրեան շրջաններում երկաթուղի շինելու ծրագիրները։

ԻՐԻՏ.—Տօնավաճառը կատարելապէս բաւարար է, որպիսին չէր եղել վերջի 10 տարում։ Համարեա բոլոր ապրանքներն էլ օգտաւով են ծախվում։ Առևտուրը լաւ սկսուեց յունվարի վերջին։ Չինաստանում, Մէջին Ասիայում և Սիբիրում ռուսական մանուֆակտուրային ապրանքի պահանջ լինելով, շատերն արդէն վերջացրին իրենց ձեռքի ապրանքը, մանաւանդ լաւ էին չինական և ասիական ապրանքների առևտուրը։ Մանուֆակտուրային ապրանքների գները 20% թանկ է անցեալ տարուայ գներից։ Գալանտերէյ, համեմների, չինապակու առևտուրը լաւ է և գները 10% աւելի են անցեալ տարուանից։ Ոտնամանների առևտուրը շատ լաւ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 Փետրվարի.— «Journ. de St.-Pétersb.»-ը ասում է, որ պայմանագրի գործադրութիւնն պահանջելիս, իհարկէ, կարելի է գործել առանց այդ պայմանագրին ստորագրող պետութիւնների համաձայնութեան։ Սակայն ցանկալի էր, որ համերաշխութիւն լինէր, որովհետև հակառակ գործունէութիւնը կընշանակէր յաւերժացնել Բօլղարիայում անիշխանութիւնը։

Մօտ օրերս Պետերբուրգում ըսպասում են Կօրէայից դեսպանութեան։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ Լիբաւայում պատերազմական նաւահանգիստ շինելը վճռուած է վերջնականապէս և նաւաշինարանի սկսուելովը պիտի աշխատանքի ձեռք զարնեն։

ՎԵՆՆԱ. «Fremdenblatt»-ը ասում է, որ ոչ մի տեղ չեն հակառակում, որ պրինց Կօբուրգի իշխելը ապօրինի է Բօլղարիայում. նոյնպէս և բոլորը համոզուած են, որ այդ գործում նախաձեռնութիւնը պէտք է պատկանի սուլթանին։ Սակայն, ըստ երևութին, դեռ մի քանի կաբինէտներ երկիւղ են կրում Սօֆիայում de facto հաստատուած իշխանութեան բարձուելու հետևանքից, որ թէև մի ջազգային տեսակէտից հաստատ հող չունի իւր ոտերի տակ, բայց և այնպէս կարող եղաւ կարգը պահպանել։ Ահա թէ ինչի հասկանալի է, որ կառավարութիւնն գահընկեց անելու առաջին քայլն առնելու, կը ցանկային բացատրութիւն ստանալ, թէ ինչ կերպով մտադրութիւն կայ պահպանելու կարգն ու խաղաղութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ.—Պարոն Նելիդօվը այսօր Ֆ. Դրան յանձնեց մի հաղորդագրութիւն, որ նրա ուշադրութիւնը դարձնում է պրինց Ֆերդինանդի բռնած ապօրինի դրութեան վերայ Բօլղարիայում։ Դրանի Մինտերէլլօն և գրաֆ Ռադօվիցը այցելեցին Ֆ. Դրան՝ նոյն նպատակով։

ԲԵՐԼԻՆ. — Պետութիւնների մէջ բանագնացութիւնները աւելի բարէացող կերպարանք է ստանում։ Գերմանիան և Աւստրիան համերաշխութեամբ աջակցում են այն ամենին, ինչ որ լինում է Բալկան թերակղզու վերայ օրինական կարգը վերականգնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Փետրվարի — «Нов.»-ն հաղորդում է, որ պետական խորհրդին առաջարկուած է պետութեան մէջ խնամակատարութիւնը վերափոխելու նախագիծ։

Կ. ՊՕԼԻՍ.—Երէկ կայացաւ մինիստրների խորհուրդ՝ քննելու Նելիդօվի հաղորդագրութիւնն, որ Ֆ. Դրան առաջարկում է պրինց Կօբուրգի դրութիւնը ապօրինի հռչատարակել։

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

12 Փետրվարի։

| | | | |
|---|---|---|---|
| Լօնդօն | 121 ր., | 120,20 ր., | 120,60 ր. |
| Համբուրգ | 59,45 ր., | 59,55 ր. | |
| Պարիզ | 47,75 ր., | 74,70 ր., | |
| Պօլուիմպերիալ | 9 | ր. 54 կ. | սակ. |
| Մաքս. կուպօն | 190 | ր. — կ. | սակ. |
| Արծաթ | 1 | ր. 36 կ. | գն. |

Բօրսային դիս. 6¼ և 7¼%.

Պետակ. բանկի 5%

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին շրջանի. | 99 | ր. — կ. | սակ. |
| 2-րդ | 97¾ | ր. — կ. | սակ. |
| 3-րդ | 97¾ | ր. — կ. | սակ. |
| 4-րդ | 98 | ր. 12 կ. | սակ. |
| 5-րդ | 97¾ | ր. — կ. | սակ. |
| 6-րդ | — | | |

Վերջին 4% վոխառութիւնը 81 ր. 62 կ. գն.

100 և 1000 արևելեան վոխառութեան 5% տոմսեր,

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին շրջանի. | 98½ | ր. 62 կ. | գն. |
| 2-րդ | 97 | ր. 62 կ. | սակ. |
| 3-րդ | 97¼ | ր. — կ. | սակ. |

Առաջին 5% նեղքին վոխառութեան 5% տանող գումարի տոմսեր 263 ր. — կ. սակ.

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ | 246¼ | ր. — կ. | սակ. |
| 5½% բէնտեր | 103 | ր. — կ. | սակ. |
| Ոսկէ բէնտ. | 196½ | ր. — կ. | սակ. |

Թղթ. քաղ. վարկի բնդհ. օբլիգ. — —

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամրանում է։

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Լոյս կը տեսնի 1888-ին առանձին գրքով

Գ. ՋՈՒԲԱՐԻ

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՓԵՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ

երկերը միասին։ Բաժանորդագինը 1 ր-էյ է ընդամենը։ Բաժանորդագրուել կարելի է միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։ Օտար քաղաքներից դիմում են «Նոր-Դար»-ի խմբագրութեանը այսպէս. Тифлисъ, въ редакцію ежедневной армянской газеты «Нор-Даръ».

(խմ.) X—17

Այն պարոնները, որոնց մօտ գտնվում է իմ «Արևելեան եղանակներ» երաժշտական գրքոյկներից, ամենախոնարհաբար խնդրում եմ, որ բարեհաճեն շտապել վճարելու այդ գրքոյկներն և գոյացած գումարը ուղարկելու մեր ամենօրեայ «Նոր-Դար» թերթի խմբագրութեան, որի տնօրինութեան յանձնվում են գրքերի վաճառումից գոյացած գումարը մեր Զէյթունցի հայ եղբայրների օգտին գործածելու համար։ Փողերը պէտք է ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“

Ալէքսանդր Բաղդասարեան

5—3

# ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ

## ԿԵԶՈՒ ԲԱԼԱՍԱՆ

Մի պրօշկի գինն է 1 ր. 65 կոպէկ։

| ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ՕՊՊՕ ՊՕՄԱԴ | ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ԲՕՆՋԻԱՆ ՕՃԱՌ |
|---|---|
| ո և է կօլդ-կրէմից լաւ է մի ամանը 1 րուբլի. | ½ կտորը 50 կ., ¼ կտորը 35 կ. |

Ուղարկելու ծախսը առանձին է հաշվում։ Վաճառվում է Ռուսիայի բոլոր գեղավաճառանոցներում և գեղատներում։ Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար է Վ. ԱՈՒՐԻԽԻՒ մօտ, Պետերբուրգում, Սարէմեաննայա, 4.

ԹԻՖԼԻՍՈՒՄ.—Դեղատնային պարանքների վաճառման Կովկասեան ընկերութեան, և Գրիվնակի մօտ։ 46—10

# ԿՕՆԴԻՏԵՐԻԱ ԵՒ ՀԱՑԱԳՈՐԾԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍ ԻՒԶԲԱՇԵԱՆԻ

Երևանեան հրապարակի վերայ

ՓԻՖԼԻՍՈՒՄ

Պատրաստի ունի ամեն օր նոր և թարմ ԿՕՆՖԵԿՏՆԵՐ ևս հրգելի և ևս տօրնի ոա պատուիրա հղուած պետութիւնից ԿԱՐԿԱՆԴԱԿ, ՇԱՔԱՐԱՀԱՑ ՑՈՒԿԱՆ, ՏՕՐՏ և ՔԱՂՑՐԱՒԻՆԻՔ ամէն պետքի։

Նոյնպէս բազմատեսակ և բազմաձև ՀԱՑԵՐ ԵՒ ՊԱՔՈՒՄԱՔ

*մեծ քանակութեամբ*

## ԲՕՆԲՕՆԵՐ ԱՐԿՂԻԿՆԵՐ

ՓԱՌԱՇԷՆ ԵՒ ՁԱՐԴԱՐՈՒՆ

Ընդունում է պատուէրներ թէ Թիֆլիսում և թէ գաւառներից շքեղ ամենաչափաւոր գներով և կատարում է նրանց ԱՐԱԳ ԵՒ ՃՇԳՈՒՆ ԹԵԱՄԲ։

Այն օտարաքաղաքացիների համար, որոնք մեծ չափաւորութեամբ և պատուիրում, լինում է նշանաւոր զիջում։

Հասցէն՝ Тифлисъ, кондитерская И. Юзбашева.

50—14

# ՇԱՏ ՁԱՓԱՒՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՄԲ

Հայոց և ռուսաց լեզուներով, սովորեցնում եմ

ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ամենահեշտ եղանակով

(Տարրական թուաբանութիւն իմացողներին սովորեցնում եմ ևս ոչ ամսուայ ընթացքում)։

Ընդունում են նոյնպէս պատուէրներ շքեղ հաշիւները պարզելու և նրանց հարգի դնելու։ Օտարաքաղաքացի ուսանողները կարող են, բացականութեան, և գիշերօթիկ լինել ևս՝ մինչև ուսման ընթացքի վարտումը։

Մանրամասնութիւնների համար տեղեկութիւն ստանալ ցանկացողը կարող է դիմել ինձ նամակով հետևեալ հասցէով.

Тифлисъ, М. Гуліеву, меблированные номера нов. дома Сараджева на Дворцовой ул.

20—17


Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Февраля 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարէնկօլի Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.